

A 10.02.07  
2-87

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

**ԳՈՐԶԱՐ ԳԵՈՐԳԻԻ ՀՈՎԱՄԵՓՅԱՆ**

**ԱԾԱԿԱՆԻ ԱՌԿԱՅԱՑՄԱՆ ԻՄԱՍՏԱԳՈՐԾԱՌԱԿԱՆ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ**

Ժ.02.07 «Գերմանական լեզուներ» մասնագիտությամբ բանասիրական  
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման  
ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2009

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ Բ.Գ.Թ., դոց. Ն. Հովհաննիսյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Բ.Գ.Ղ., պրոֆ. Ի. Կարապետյան  
Բ.Գ.Թ., դոց. Գ. Գասպարյան

Առաջատար կազմակերպություն՝ «Ինտերլինգվա» լեզվագիտական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կկայանա 2009թ, դեկտեմբերի 25 -ին ժամը 13.30-ին, Երևանի պետական համալսարանի 009 մասնագիտական խորհրդի նիստում (Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2009թ.-ի նոյեմբերի 24 -ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար *Գ. Կարապետյան* Ե.Լ. Երզնկյան



4894-2009

Լեզվագիտական մտքի զարգացման արդի փուլը նշանավորվեց նրանով, որ լեզվաբանական մի շարք ուղղություններ (գործաբանություն, պրաքսեմատիկա) իրենց հետազոտական հետաքրքրությունների շրջանակ ներառեցին լեզվի խոսքայնացման լեզվական և արտալեզվական գործոնների բազմաբարդ խնդիրներ: Բեղմնավոր եղան հատկապես այն մոտեցումները, որոնք գիտական միտքն ուղղորդեցին դեպի լեզվագործածության՝ հաղորդակցական միջավայրով պայմանավորված և այդ համատեքստում ձևավորվող առանձին ասույթների ենթադրյալ և փաստացի իմաստների փոխհարաբերությունները: Համապատասխանաբար կազմավորվեցին հարաբերականորեն ինքնուրույն հետազոտական ուղղություններ՝ իրենց տարբերակիչ անվանումներով: Մասնավորապես «գործաբանությունը» փորձում է դիտարկել խոսող/գրող-լեզվամիավորներ-ունկնդիր/ընթերցող համակարգը՝ ձգտելով պարզել խոսքաշարում (տեքստում) գործածվող բառամիավորների իմաստային փոփոխություններն ըստ նշված համակարգում առկա գործոնների: Մենք կարևորում ենք «գործաբանական» լեզվաբանության այն դիրքորոշումը, որ բառի կամ բառակապակցության բառարանային իմաստը (տվյալ դեպքում՝ ածականի) ձեռք է բերում փաստացի իմաստ որոշակի հաղորդակցական պայմաններում (գործաբանական, հանրամշակութային, հոգեբանական) և արտալեզվական այնպիսի հանգամանքներում, որոնք իրենց արտացոլում են գտնում լեզվական երևույթների փոխհարաբերություններում:

**Ուսումնասիրության թեմայի արդիականությունը:** Սույն ատենախոսության թեմայի ընտրությունը, նախ և առաջ, պայմանավորված է լեզվաբանության զարգացման ժամանակակից միտումներով, որոնք դրսևորվեցին այնպիսի լեզվաբանական ուղղություններում, որպիսիք գործաբանությունն ու պրաքսեմատիկան են: Վերջին ժամանակներս նշյալ լեզվաբանական ուղղությունների հետազոտական հետաքրքրության կիզակետում են հայտնվել լեզվական միավորների, այդ թվում նաև առանձին խոսքի մասերի, առկայացման բազմաբարդ խնդիրները:

Առաջ են եկել մոտեցումներ, որոնցում կարևորվել են իմաստային գործառույթների հաղորդակցական դիտավորությանն ուղղված տարամակարդակ և տարաբնույթ լեզվական երևույթների համալիր ուսումնասիրության բազում հարցեր<sup>1</sup>: Նման հարցերից շատերը առանձնահատուկ ուշադրության արժանացան մասնավորապես պրաքսեմատիկական լեզվաբանական դպրոցի կողմից առաջ քաշված առկայության տեսության շրջանակներում:

Չնայած այն մեծաքանակ աշխատություններին, որոնցում լուսաբանվում են անգլերենի ածականի իմաստային, շարահյուսական, ձևաբանական առանձնահատկություններին վերաբերող ամենատարբեր խնդիրները, այնուամենայնիվ առայժմ լուսաբանված չեն անգլերենի ածականի առ-

<sup>1</sup> Ջահուկյան Գ. Բ., ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Եր., 1974. Бондарко А.В., Об актуализационных признаках предложения// Теоретические проблемы синтаксиса индоевропейских языков. Л., Наука, 1975.

կայացման գործոնները, ինչը մեր կարծիքով, մասամբ բացատրվում է նրանով, որ ածական խոսքի մասն իր «բնութամբ» բավական բարդ երևույթ է և աչքի է ընկնում իմաստային և շարահյուսական յուրահատկություններով, որոնց ուսումնասիրությունը հանգեցրել է ամենատարբեր, երբեմն էլ հակասական ու իրարամերժ տեսակետների և մեկնաբանությունների:

Այս համատեքստում էլ ծագեց արդի անգլերենի ածականի առկայացման իմաստագործառական առանձնահատկությունների հարաբերակամորեն համալիր հետազոտման անհրաժեշտության գաղափարը՝ ինչը իհարկե չի կարող սպառվել մեկ ատենախոսության շրջանակներում: Վերոհիշյալ դատողություններով է պայմանավորված ուսումնասիրության թեմայի արդիականությունը:

**Ուսումնասիրության հետազոտական լեզվական նյութը** վերցված է 19-րդ և 20-րդ անգլիական և ամերիկյան դասական և ժամանակակից գեղարվեստական գրականությունից: Ուսումնասիրությունը կատարվել է ավելի քան 3500 օրինակների հիման վրա:

**Սույն ատենախոսության ուսումնասիրության նպատակն է** հետազոտել անգլերենի ստորոգական և որոշչային ածականների առկայացման իմաստագործառական առանձնահատկությունները ստորոգական և գնահատողական կառույցներ պարունակող ասույթներում և տեքստում: Ելնելով այս նպատակից՝ մեր առջև դրել ենք հետևյալ խնդիրները.

- տարրորոշել ածականի առկայացման լեզվական և արտալեզվական գործոնները,
- վերհանել ստորոգման հիմնարար գործառույթները ածականի առկայացման գործընթացում,
- տարրորոշել ածականական ստորոգական կառույցներ պարունակող ասույթների դասակարգման սկզբունքները,
- պարզել, թե արտալեզվական աշխարհի առավելապես որ «հատվածներն» են արտացոլվում խոսքում՝ ածականական ստորոգական կառույցների միջոցով,
- որոշել գնահատության տրամաբանական կառույցի այն հիմնարար բաղադրիչները, որոնք կարող են հիմք հանդիսանալ լեզվական ուսումնասիրության համար,
- պարզաբանել, թե որոնք են լեզվական և արտալեզվական այն գործոնները, որոնք նպաստում են գնահատության իմաստի սերմանը ածականական գնահատության կառույցներ պարունակող ասույթներում/տեքստերում:

**Ուսումնասիրության նորույթը:** Երկա ուսումնասիրության մեջ առաջին անգամ

- տարրորոշվում են արդի անգլերենի ածականի առկայացման լեզվական և արտալեզվական գործոնները,
- բացահայտվում են ածականի գործառական փոփոխությունից բխող իմաստաբերականական և ձևաբանական որոշ առանձնահատկություններ,

- բացահայտվում են ածականական ստորոգական և գնահատողական կառույցներ պարունակող ասույթների/տեքստերի և արտալեզվական աշխարհի փոխհարաբերությունը պայմանավորող որոշ առանձնահատկություններ,
- լեզվական բնության է ենթարկվել գնահատություն տրամաբանական կարգը,
- ածականական գնահատողական կառույցները հետազոտվել են ոչ միայն ասույթի, այլև տեքստի մակարդակում:

**Ուսումնասիրության մեթոդաբանական հիմքը:** Ուսումնասիրության մեջ, ելակետային համարելով իմաստագործառական մոտեցումը, լեզվական երևույթների հետազոտման ոլորտում տարբեր փուլերում կիրառվել են լեզվական նյութի վերլուծության բաշխական, զուգադրական, փոխակերպական մեթոդները:

**Ուսումնասիրության տեսական նշանակությունը:** Լեզվաբանության մեջ ընդհանրապես և անգլերենի քերականության մեջ մասնավորապես առաջին քայլն է կատարվում ածական խոսքի մասի առկայացման լեզվական և արտալեզվական գործոնների ուսումնասիրության ուղղությամբ: Յետազոտությունը կատարված է ինչպես ավանդական քերականական և իմաստաբանական հայեցակարգերի, այնպես էլ ժամանակակից լեզվաբանական դպրոցների տեսությունների համատեքստում: Ատենախոսության մեջ առաջ քաշված դրույթները, իմաստագործառական սկզբունքների հիման վրա կատարված դասակարգումները նոր փաստեր են արձանագրում լեզվական միավորի (տվյալ դեպքում՝ ածականի) առկայացման գործընթացում լեզվական և արտալեզվական աշխարհների, իմաստային և շարահյուսական գործառույթների, շարահյուսափմաստային և քերականական կարգերի փոխհարաբերությունների մեջ:

**Ուսումնասիրության գործնական նշանակությունը:** Ուսումնասիրության արդյունքները կարող են օգտագործվել անգլերենի տեսական և գործնական դասընթացներում, ինչպես նաև անգլերենի քերականությանը նվիրված տեսական հետազոտություններում: Չենք բացառում նաև, որ սույն աշխատության որոշ դրույթներ կարող են օգտագործվել համակարգչային քարզմանության որոշակի ծրագրերի ստեղծման գործընթացում:

**Ուսումնասիրության կառուցվածքը:** Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

**Ներածության** մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված են ուսումնասիրության նպատակն ու խնդիրները, տեսական արժեքը, գիտական նորույթը, գործնական նշանակությունը:

**Առաջին գլխի** («Ածականի շարահյուսափմաստային հարացույցը որպես առկայացման նախապայման») առաջին ենթաբաժնում («Առկայացման տեսության հիմնախնդիրները լեզվաբանական գիտությունների զարգացման արդի փուլում») քննության են առնվում առկայության տեսության հիմնախնդիրները:

Ժամանակակից լեզվաբանական դպրոցների՝ մասնավորապես գործաբանության և պրաքսեմատիկայի տեսագործնական հարցադրումների

խաչմերուկում, լեզվական երևույթների նկատմամբ ցուցաբերած նոր մոտեցումների լույսի ներքո առաջ եկավ «առկայացում» հասկացությունը: Ամենաընդհանուր գծերով այն ընկալվում է որպես որոշակի ժամանակի մեջ կատարվող մի գործողություն, որի ընթացքում լեզվական միավորները վիրտուալ վիճակից անցնում են փաստացի վիճակի՝ լեզվի ներուճակ միավորից դառնալով ասության առկա միավոր: Պրաքսեմատիկական լեզվաբանական ուսմունքի շրջանակներում առկայացման տեսությունը ստացավ առանցքային նշանակություն և առկայացման գործընթացը դարձավ բազմակողմանի ուսումնասիրման առարկա: Այս դպրոցի ներկայացուցիչները, հիմք ընդունելով այն փաստարկը, որ լեզվական նշանի իմաստների ամբողջությունը բաց համակարգ է և արդյունք է մարդու պատմահանրամշակութային գործունեության (պրաքսիսի), «նշան» եզրը փոխարինեցին «պրաքսեմ» եզրով: Ի հակառակ լեզվական նշանի սոսյուրյան մեկնաբանության (նշանակելի - նշանակյալ) նրանք առաջ քաշեցին այն գաղափարը, թե պրաքսեմը ունի ոչ թե նշանակյալ, այլ իմաստներ սերելու անհատում կարողություն<sup>2</sup>: Բառիմաստն այս տեսության շրջանակներում սկսեց դիտարկվել որպես քառաստիճան գործընթացի (պրաքսեմ→շարույթ→ասույթ→տեքստ) շեմային փուլի կարևորագույն միավոր: Պրաքսեմատիկական լեզվաբանական դպրոցը բավականին ընդլայնեց լեզվական միավորների առկայացման առանձնահատկությունների ուսումնասիրության շրջանակները՝ ընդգրկելով հետևյալ հիմնական տիրույթները.

- իմաստի առկայացում պրաքսեմների միջոցով կամ պրաքսեմային առկայացում
- ասույթային (նախադասություն) առկայացում
- սուբյեկտիվության առկայացում
- տեքստային առկայացում

Տեքստի մակարդակում, ի թիվս այլ գործոնների նրանք տարբերակում են երկու կարգի երևույթներ՝ պարապրաքսեմներ և մետապրաքսեմներ: Պարապրաքսեմներն այն լեզվական երևույթներն են, որոնք կոչված են ասույթի/տեքստի մակարդակում իրականացնելու լեզվական բովանդակության կապը արտալեզվական իրողությունների հետ: Մետապրաքսեմներն այն լեզվական միավորներն են, որոնց միջոցով տրամաբանական կապակցելիության հարաբերություններ են հաստատվում տեքստի առանձին հատվածների միջև:

Լեզվաբանների կարծիքով, մետապրաքսեմի գործառույթ կարող են իրականացնել տարբերույթ լեզվական իրողություններ և հետազոտողի նպատակն է բացահայտել այդ իրողությունները՝ տվյալ համատեքստին և խոսքային իրադրությանը համապատասխան:

Առաջին գլխի երկրորդ ենթագլխում (“Ածականի առկայացման գործոնների ընդհանուր բնութագիրը”), հաշվի առնելով մեր խնդրո առարկա-

յի հանդեպ եղած ավանդական և նորագույն մոտեցումները, փորձել ենք առանձնացնել ժամանակակից անգլերենի ածականի առկայացման գործոնները՝ թվով յոթ, որոնցից երեքը (խոսքային իրադրություն, լեզվական համատեքստ, ասույթյան սուբյեկտի դիտավորություն) պարտադիր նախապայման են ցանկացած լեզվական միավորի առկայացման համար, իսկ մյուս չորսը՝ հատուկ են միայն ածական խոսքի մասին և «գործողության» մեջ են դրվում որոշչային կամ ստորոգական գործառույթին համապատասխան.

1. ածական անվան իմաստային հարացույց
2. գոյական անվան իմաստային հարացույց
3. օժանդակ բայի իմաստային հարացույց
4. գնահատության իմակ

Երկրորդ գլխի (“Ածականի առկայացման իմաստագործառական առանձնահատկությունները ստորոգական կառույցները պարունակող ասույթներում”) առաջին ենթագլխում (“Ստորոգման գործառույթներն ածականի առկայացման գործընթացում”) փորձ է արվում ստորոգմանը վերաբերող տարբեր հայեցակետերի վերլուծության արդյունքում, ընդհանրացնել և համակարգել ստորոգման հիմնական հատկանիշները:

Յայտնի իրողություն է, որ նախադասության կազմավորման միջուկը ստորոգումն է, որը հնարավորություն է ընձեռում լեզվական ձե-վերի օգնությամբ արտահայտելու մարդու մտածողության գործունեության նվազագույն ակտերը: Եթե նախադասության եզրը գործածենք լայն առումով, նրկատի ունենալով հաղորդակցային մակարդակը (խոսքը), ապա ստորոգայնությունը կարող է ընկալվել որպես ասույթի ձևավորման կարևորագույն նախապայման:

Սույն աշխատության շրջանակներում ստորոգումը մենք ընկալում ենք որպես՝

1. մտավոր ակտ (վերլուծություն, համադրում, մասնավորեցում, ընդհանրացում)
2. հատկանիշի վերագրում ժամանակի մեջ (հատկանիշի վերագրման աստիճանացում/ ոչ աստիճանացում)
3. ասույթի բովանդակության հարաբերակցում օբյեկտիվ իրականությանը:

Երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում (“Ածականի առկայացման իմաստագործառական առանձնահատկությունները ստորոգական կառույցներում”) հետազոտական լեզվական նյութը ենթարկել ենք կրկնակի դասդասման, մի դեպքում կիրառելով ստորոգական և որոշչային գործառույթների փոխակերպման ավանդական մեթոդը, մյուս դեպքում՝ ստորոգման էությունական յուրակերպությունից բխող սկզբունքները:

Յարկ ենք համարում նշել, որ փոխակերպման մեթոդի կիրառումը մեզ պարտադրեց հաշվի առնել բառամիավորների գործածության նորմերին վերաբերող տեղեկություններ պարունակող հեղինակավոր բառարանների տվյալներ:

Այսպիսով, փոխակերպման մեթոդի կիրառման արդյունքում մեր հետազոտական լեզվական նյութը վերաբաշխվեց հետևյալ խմբերում և ենթախմբերում:

<sup>2</sup> Lafont R., Le Travail et la Langue, Paris, Flammarion, 1978, էջ 140; Bres J., De Bally a la praxématique // J.-M. Barberis, J. Bres & P. Siblot (eds.) De l'actualisation CNRS Editions, 1998, էջ 78.

II խումբ - գործառույթի փոփոխությունը առաջ չի բերում իմաստային փոփոխություն:

ա) գործառույթի փոփոխության արդյունքում ածականները միևնույն գոյականի հետ հարաբերվելիս որևէ էական իմաստային փոփոխություն չեն կրում:

I think my attitude is more selfish. (A. Christie, Murder on The Orient Express)→more selfish attitude

It was a fine position with plenty of fresh air. (O. Wilde, The Picture of Dorian Gray)→the position was fine

բ) գործառույթի փոփոխության արդյունքում ածականները միևնույն գոյականի հետ հարաբերվելիս որևէ էական իմաստային փոփոխություն չեն կրում, սակայն ստորոգական գործառույթում հանդես են գալիս լրացում շարույթով (նախդրային դերանվանական) կամ ենթարկվում են ձևաբանական փոփոխության: Օրինակ.

Exactly - I said hastily and put the offending volume in its proper place. (A. Christie, Murder on The Orient Express) →The place was proper for some occasion, for something (նախդրային շարույթ):

Այս ասույթում place գոյականի հետ proper ածականի որոշչային գործառույթից ստորոգական գործառույթին անցնելու դեպքում կիրառվում է for some occasion, for something նախդրային շարույթը:

His former wife → She was formerly his wife (ձևաբանական փոփոխություն)

գ) ածականի գործառույթի փոփոխությունը առաջ չի բերում իմաստային էական տարբերություն, սակայն սահմանափակվում է շնչավոր/անշունչ քերականական կարգով: Այլ կերպ ասած՝ որոշչային գործառույթից անցումը ստորոգականին մի դեպքում հնարավոր է դառնում շնչավոր գոյականի հարաբերակցությամբ, մեկ այլ դեպքում՝ անշունչ:

Ածականներ, որոնց ստորոգայնացումը հնարավոր է շնչավոր գոյականի հարաբերակցությամբ: Օրինակ.

The happy prince never dreams of crying for anything. (O. Wilde, The Picture of Dorian Gray)→The prince is happy (շնչավոր):

He is lulled into deeper slumber by the happy thought of two reservists. (B. Shaw, Miss Warren's Profession) →\* The thought was happy (անշունչ):

Ածականներ, որոնց ստորոգայնացումը հնարավոր է անշունչ գոյականի հարաբերակցությամբ: Օրինակ.

A true story→The story is true (անշունչ)

He'd operated as a real doctor and it had been a pleasure. (M. Puso, The Godfather)→\*The doctor is real (շնչավոր)

III խումբ - գործառույթի փոփոխությունը առաջ է բերում իմաստային փոփոխություն:

ա) որոշչայինից ստորոգական գործառույթին անցնելիս տեղի է ունենում ածականի իմաստի նեղացում

Այսպես, a tired man որոշչային կառույցում tired ածականը նշանակում է թե՛ ֆիզիկապես, թե՛ հոգեպես հոգնած, սակայն

It was a very hot day and the road was terribly dusty, and before Hans had reached the sixth milestone he was so tired that he had to sit down and rest. (O. Wilde, The Picture of Dorian Gray)

Ասույթում tired ածականի իմաստը ստորոգական գործառույթում նեղացել է և ձեռք է բերել միայն ֆիզիկական հոգնածության իմաստ:

բ) որոշչային գործառույթում ածականը հանդես չի գալիս իր առաջնային, ուղիղ իմաստով և տվյալ իմաստով տվյալ գոյականի հետ ենթակա չէ ստորոգայնացման:

a big friend – լավ ընկեր→\* a friend is big

a new friend – ընկեր, որի հետ վերջերս են ծանոթացել →\* a friend is new

գ) որոշչային գործառույթում ածականը հանդես չի գալիս իր առաջնային, ուղիղ իմաստով, սակայն նույն գոյականի հետ ստորոգայնացման դեպքում վերադառնում է իր ուղիղ իմաստին:

A beautiful book – լավ գիրք→the book is beautiful - գիրքը գեղեցիկ է դ) ստորոգական և որոշչային գործառույթներում ածականը հանդես է գալիս տարբեր իմաստներով:

The child was lost - երեխան կորել է →a lost child – որք երեխա

My mother was wrong – Մայրս սխալվել է →a wrong mother – մեկ ուրիշի մայր

Her husband is late – Նրա ամուսինը ուշացել է →her late husband – նրա հանգուցյալ ամուսինը

ե) ստորոգական և որոշչային գործառույթներում տեղի է ունենում ածականի տարածական իմաստ արտահայտող իմակի փոփոխություն:

The shop is silent – խանութում լուռ է (խանութի մեջ)→The darkness was setting like more dirt and dust over the silent shop. (D. Thomas, The Adventure in the Skin)

...the silent shop - լուռ, խաղաղ անկյունում գտնվող խանութ (խանութից դուրս)

զ) ստորոգական գործառույթում ածականը մատնանշում է հատկանիշ, իսկ որոշչայինում՝ հատկանիշի հատկանիշ:

the candidate is wrong – թեկնածուն սխալ է (հատկանիշ)→a wrong candidate– սխալ ընտրված թեկնածու

III խումբ - ածականներ, որոնք միտում ունեն սահմանափակվելու առավելապես մեկ գործառույթով (որոշչային) և ստորոգայնացման չեն ենթարկվում:

Չարկ է նշել, որ անգլերենի ավանդական քերականագիտության մեջ արծանագրված է այն փաստը, որ ընդհանրապես ստորոգայնացման չեն ենթարկվում հարաբերական ածականները (բացառությամբ որոշ ածականների): Նյութի խմբավորման շրջանակներում, կարծում ենք, մեզ հաջողվել է որոշակի տարբերակում մտցնել այդ կարգի ածականների իմաստաքերական

նական տիրույթում և մեր հետազոտական նյութի սահմաններում առանձնացնել

ա) սաստկական/մեղմական ածականներ

a plain nonsense →\* a nonsense is plain

a slight effort →\* an effort is slight

բ) սահմանափակող ածականներ

A problem for our whole society? – the man was saying. (A. Sillitoe, The Loneliness of the Long Distance Runner) →\* the society was whole.

The fact that Frankie was an only child in a district. (A. Sillitoe, The Loneliness of the Long Distance Runner) →\* The child is only

գ) անվանակազմ ածականներ

an atomic scientist →\* a scientist is atomic

a wooden actor →\* an actor is wooden

Համաձայն ստորոգման՝ մեր կողմից առանձնացված հատկանիշների ածականական ստորոգական կառույցներ պարունակող ասույթները դաս դասվել են ըստ հետևյալ հակադրությունների:

1. Իմաստի ընդհանրացում / մասնավորեցում

Ստորոգական կառույց պարունակող ասույթի ածականական անդամի արտահայտած իմաստի ընդհանրացում տեղի է ունենում առավելապես այն դեպքերում, երբ ասույթի ենթական արտահայտված է

ա) վերացական իմաստ ունեցող գոյականով.

“Revenge may be wicked, but it’s natural”, answered Miss Rebecca.

(W. Thackeray, Vanity Fair)

բ) անորոշ դերանուններով.

Everything was dainty, fresh, sweet-smelling: everything in perfect order. (J. Galsworthy, The Man of Property)

Իմաստի մասնավորեցում տեղի է ունենում, երբ ասույթում առկա են

ա) նախդրային շարույթներ, որոնց միջոցով բացահայտվում է ասույթի ենթակային հատուկ հատկանիշներից մեկը: Օրինակ.

He was famous in field sports, famous at a song, famous on parade.

(W. Thackeray, Vanity Fair)

“... but he’s so busy with his yacht.” (J. Galsworthy, To Let)

բ) մակբայական շարույթներ (տեղի, ժամանակի)

The atmosphere of his house was strange and pockety when Jolyon came in and them of the dog Baltasar’s death. (J. Galsworthy, In Chancery)

It was cool there, fragrant of larches. (J. Galsworthy, To Let)

գ) մեկից ավելի ածականներ

He looked so beautiful and peaceful sitting in that chair under the tree.

(J. Galsworthy, In Chancery)

դ) տեղի պարագա

Everything within his view was lovely and placid. (Ch. Dickens, Little Dorrit)

2. Հատկանիշի վերագրման աստիճանայնություն / ոչ աստիճանայնություն

Այս հակադրությունը հիմնականում պայմանավորված է ստորոգական կառույցի բայական անդամի իմաստով (համադրական միջոց) և ասույթի իմաստի ձևավորմանը մասնակցող նախդրային և մակբայական շարույթներով (վերլուծական միջոց):

ա) հատկանիշի աստիճանական վերագրում՝ պայմանավորված ածականական ստորոգական կառույցի բայական անդամի իմաստով կամ հատկանիշի աստիճանական վերագրում՝ պայմանավորված ասույթում առկա նախդրային և մակբայական շարույթներով.

Why, Ruth studied Saxon, became clever in it. (J. London, Martin Eden)  
His coffee grew cold, while he scanned the paper indifferent. (Th. Dreiser, Sister Carrie)

The morning, which had been bright and clear gradually become overcast. (Ch. Dickens, Dombey and Son)

And the strange story of his father’s Indian summer become slowly clear to him. (J. Galsworthy, In Chancery)

Cain’s jaw fell, and his face went bleak with disappointment. (D. Carter, Tomorrow is with us).

..... though I went sick at the thought of losing her away from my home. (E. Gaskell, Mary Barton).

բ) հատկանիշի ոչ աստիճանական (արագ, ակնթարթային) վերագրում՝ պայմանավորված ստորոգական կառույցի բայական անդամի իմաստով կամ հատկանիշի ոչ-աստիճանական (արագ, ակնթարթային) վերագրում՝ պայմանավորված ասույթում առկա մակբայական շարույթներով.

Eppie had given a violent start, and turned quite pale. (G. Eliot, Silas Marner)

She fell absolutely silent. (Th. Dreiser, An American Tragedy)

.... took a deep breath of the moist air which had suddenly become fresh and sweet. (A. Maltz, The Way Things Are)

His sister became abruptly still, and lapsed into a pondering silence. (T. Hardy, Tess of the d’Urbervilles)

3. Լեզվական իրողություն / արտալեզվական իրողություն

Հիմք ունենալով այս հակադրությունը և առաջին պլան մղելով լեզվական նյութի ընտրության հաճախականության սկզբունքը՝ փորձել ենք պարզել, թե ածականական ստորոգական կառույցներ պարունակող ասույթներն արտալեզվական աշխարհի առավելապես որ «հատվածներն» են արտահայտում առարկաների և հարաբերությունների ամենալայն իմաստով: Լեզվական նյութը թույլ տվեց առանձնացնել հետևյալ ենթախմբերը.

ա) ասույթի սուբյեկտի արտաքին (ֆիզիկական) հատկանիշներ

You are strong, Jon. (J. Galsworthy, To Let)

The old man was tall and shadowy and stopping. (P. Abrahams, The Path of Thunder)

բ) ասույթի սուբյեկտի ներքին (հոգեկան) հատկանիշներ  
It's a part of my character. I am sensitive, ardent, conscientious, and imaginative. (Ch. Dickens, Little Dorrit)

You got on because you were selfish and unscrupulous. (B. Shaw, Four plays)

գ) բնութագրում՝ շրջակա սոցիալ-հասարակական միջավայրի հարաբերությամբ.

He and Rawdon are playing at cards every night, and you know he is very poor... (W. Thackeray, Vanity Fair)

Society is hopelessly snobbish... (T. Hardy, Tess of the d'Urbervilles)

դ) բնութագրում՝ շրջակա բնակլիմայական միջավայրի հարաբերությամբ.

The morning was wet and foggy... (T. Hardy, Tess of the d'Urbervilles)

The day was cold and wet, but she scarcely knew it. (Ch. Dickens, Our Mutual Friend)

Ածականական ստորոգական կառույցներ պարունակող ասույթների դասակարգումը, համաձայն լեզվական/արտալեզվական իրողության, հնարավորություն է տալիս հաստատելու պրաքսեմատիկական լեզվաբանության դարոցի այն թեզը, որ «լեզվական այս կամ այն կառույցը (բառից մինչև տեքստ ընկած տարածքում) լեզվում կապիտալացնում է, իսկ խոսքում պրտարկում է արտալեզվական իրականության որոշակի հարաբերություններ»<sup>3</sup>:

**Երրորդ գլխի** («Ածականի առկայացման իմաստագործառական առանձնահատկությունները գնահատողական կառույցներ պարունակող ասույթներում/տեքստերում») **առաջին ենթագլխում** («Ածականական գնահատողական կառույցների ընդհանուր բնութագիրը») փորձ է արվում «գնահատողական կառույց» տրամաբանական կարգը քննության ենթարկել լեզվաբանության տեսանկյունից:

«Գնահատողական կառույց» հասկացությունը առաջ է եկել տրամաբանության՝ լեզվամտածողական ակտերն ուսումնասիրող այնպիսի մի գիտաճյուղից, որպիսին արժութաբանությունն է (աքսիոլոգիա): Այս գիտաճյուղը մասնավորապես ուսումնասիրում է այն լեզվամտածողական ակտերը, որոնց ձևավորման առաջնային և վերջնային փուլերում առկա է գնահատություն: Տրամաբանության մեջ գնահատողական և ոչ գնահատողական դատողությունների միջև եղած սահմանագիծը որոշելու համար շատ հաճախ ելակետային է համարվում «նկարագրել-գնահատել» հակադրությունը:

Նկարագրության կառույցները հաղորդում են օբյեկտիվ իրականության ընդհանուր պատկերը, ներկայացնում են առարկաների միջև գոյություն ունեցող հարաբերությունները: Գնահատության կառույցները՝ «ներկայացնում

<sup>3</sup> Богданов В.В., Природа включенных предикатов // Лингвистические исследования, вып. 1, Л., 1974, с. 18.

են այն, ինչը մարդը համարում է արժեքավոր, ինչը՝ վատ կամ լավ, արտահայտում հուզմունքներ այն մասին, թե ինչն է չար, ինչն է բարի»<sup>4</sup>:

Լեզվաբանության տեսանկյունից գնահատողական կառույցների հետազոտման համար անհրաժեշտ է հաշվի առնել տրամաբանների կողմից առանձնացված խնդրո առարկա կառույցի կազմավորման բաղադրիչները: Դրանք հիմնականում չորսն են.

1. Գնահատության սուբյեկտը - անձը, որը որևէ առարկայի (երևույթի) նկատմամբ ցուցաբերում է գնահատողական վերաբերմունք
2. Գնահատության օբյեկտ - առարկան (երևույթը), որի նկատմամբ ցուցաբերվում է գնահատողական վերաբերմունք
3. Գնահատության հիմունք - այն (դիրքորոշում, տեսակետ, փաստարկ) ինչի հիման վրա կատարվում է գնահատությունը
4. Գնահատության բնույթը, որի հիմնական տարրերն են (+) կամ (-) հարանշաններ

Ի մի բերելով գիտական գրականության մեջ խնդրո առարկա հարցի շուրջ եղած մեզ հայտնի տեսակետները, եկանք այն եզրակացության, որ գնահատողական կառույց ձևավորող գլխավոր տարրերից մեկը ածականն է և վերջինիս իմաստային հարացույցի չեզոք (0), դրական (+) կամ բացասական (-) հարանշանները առկայացման ընթացքում կարող են պահպանվել կամ փոխկերպվել՝ կախված լեզվական և արտալեզվական մի շարք գործոններից: Ածականական գնահատության կառույցներում բայի միջոցով իրականացվում է գնահատության ակտը, իսկ ածականի միջոցով՝ գնահատության բովանդակությունը: Ածականական գնահատողական կառույց/կառույցներ պարունակող ասույթի բովանդակային ուղղվածությունը պայմանավորված է նաև գնահատության ակտի կողմնորոշիչ, սահմանափակող տարրով՝ գնահատության հիմունքով:

Առանձնացրել ենք գնահատության հիմունքի հետևյալ հիմնական տիպերը՝

#### 1. Ժամանակային

Ժամանակային հիմունքի գործառությունը կարող են իրականացնել նախդրային շարույթների (at, on, after, before) և շաղկապների (when, as, while) միջոցով ներմուծված երկրորդական նախադասությունները: Այստեղ հնարավոր են ժամանակային հիմունքի տարբեր դրսևորումներ.

ա) գնահատությունն արդեն հայտնի է, ընդգծվում է հատկանիշի ինտենսիվության աստիճանը: Օրինակ.

The great advantage of Highgate is the view over London. At night the view from my window is splendid. (V. Woolf, Night and Day)

My arthritis is bad today. (I. Murdock, A Fairly Honorable Defeat)

Առաջին ասույթում դրական [+ ] հարանշանով գնահատությունը ներըմբռնվում է նախորդ համատեքստի օգնությամբ (Եթե պատուհանից երեկացող տեսարանը առավելություն է, ապա տեսարանն էլ գեղեցիկ կլինի):

<sup>4</sup> Ивин А.А., Основания логики оценок, ИМУ, 1970 с. 11.

Հաղորդակցական տեսանկյունից ասույթի հիմնական ասելիքը (ասության դիտավորությունը) հետևյալն է - «Գիշերը պատուհանից երևացող տեսարանը հիասքանչ է»: Գնահատության ժամանակային հիմունքը կապված է ածականի իմաստի սաստկացման հետ՝

(good – beautiful – splendid)

Երկրորդ ասույթում բացասական գնահատությունը [-] պայմանավորված է գնահատության օբյեկտի իմաստային առանձնահատկությամբ: Ժամանակի պարագան ասույթ է ներմուծում ուժգնացող ներուճակ տարր:

Նման ասույթներում ժամանակի պարագաների կրճատումը չի կարող խաթարել, սակայն կարող է նեղացնել, «աղքատացնել» ասույթի ընդհանուր իմաստը:

բ) գնահատության և ժամանակային սահմանափակման տարրերը կարող են հանդես գալ այնպիսի հարաբերությամբ, երբ գնահատության օբյեկտի իմաստային կողմը դադարում է առաջնային լինելուց և ժամանակային սահմանափակման գործոնը ձեռք է բերում հաղորդակցական ավելի մեծ արժեք: Օրինակ.

"It's absurd", Kitty thought; it's ridiculous to come out in full evening dress at this time of day. (V. Woolf, The Years)

Դժվար չէ նկատել, որ ժամանակային սահմանափակման տարրերի կրճատումն այս դեպքում կարող է աղավաղել ասույթի իմաստը՝ խաթարելով ասության տրամաբանությունը:

## 2. Տարածական

Գնահատության տարածական հիմունքը կապված է երկու տեսակի սահմանափակման հետ. մի դեպքում այն կարող է կրել ստատիկ, մեկ այլ դեպքում՝ դինամիկ բնույթ: Առաջին դեպքում սահմանափակումը զուտ տարածական է, իսկ երկրորդում՝ գնահատությունն իրականացվում է տարածության մեջ սուբյեկտի զբաղեցրած դիրքին համապատասխան:

Այսպես կոչված տարածական ստատիկ սահմանափակիչ տարրերը կարևոր հաղորդակցական գործառույթ են իրականացնում ասույթում և ներմուծվում են նախդիրների (in, between), մակբայների (here, there), շաղկապի (when) օգնությամբ: Օրինակ.

"Damp, but not too damp", Kitty smiled. It's easy in Oxford.

I should think. It's always raining here. (V. Woolf, The Years)

"We are new in this district". (J. Steinbeck, The Winter of Our Discontent)

Այստեղ նույնպես պարագաների սղումը կարող է առաջ բերել իմաստի աղավաղում (It's easy...? We are new... ?), քանի որ նրանք կարևոր հաղորդակցական գործառույթ են իրականացնում:

Տարածական դինամիկ սահմանափակիչ տարրերը կապված են զրգնահատության սուբյեկտի նկատմամբ օբյեկտի տեղաշարժման հետ և հակառակը:

Այս դեպքում հաճախ են գործածվում distance պարբսեմը, որոշ մակբայական շարույթներ (behind them, before them), as շաղկապով ներմուծված երկրորդական նախադասություններ: Օրինակ.

Black specks in the distance I saw them coming. I could follow all maneuvers, saying. "It's getting smaller or it's getting bigger". (S. Becket, Molloy)

## 3. Սոցիալական

Գնահատության հիմունքի սոցիալական ուղղվածության հարցն այնքան բազմաբովանդակ է, որ կարող է առանձին ուսումնասիրության առարկա դառնալ: Սույն աշխատության շրջանակներում կսահմանափակվենք մի քանի տիպերի հակիրճ նկարագրությամբ:

Գնահատության հիմունքի սոցիալական բովանդակությունը կարող է պայմանավորված լինել տվյալ ժողովրդին բնորոշ պատկերացումներով կամ էլ որոշակի սոցիալական խմբի հայացքներով: Օրինակ.

People would say of Mrs.Pritchard that she had the darlingest little orchid house. It was precious and valuable. It was better than jewelry or furs. (J. Steinbeck, The Wayward Bus)

Ասույթում people գոյականը հանդես է գալիս «որոշակի սոցիալական խումբ» իմաստով:

Այսպիսով, ի մի բերելով խնդրի առարկայի վերաբերյալ վերոշարադրյալ մտքերն ու տեսակետները, գալիս ենք այն եզրակացության, որ գնահատողական կառույցների ուսումնասիրությունը գիտական հետաքրքրություն է ներկայացնում ոչ միայն տրամաբանության, այլև լեզվաբանության համար: Ածականի առկայացման իմաստագործառական առանձնահատկությունների հետազոտման տեսանկյունից անհրաժեշտություն է առաջանում ուսումնասիրելու ածականական գնահատողական կառույցների բաղադրիչների (սուբյեկտ, օբյեկտ, հիմունք, ածականով արտահայտված գնահատություն) փոխհարաբերությունները ոչ միայն ասույթի, այլև տեքստի մակարդակում:

Երրորդ գլխի երկրորդ ենթագլխում («Ածականի առկայացման իմաստագործառական առանձնահատկությունները գնահատողական կառույցներում») քննության են առնվում այն լեզվական միջոցները, որոնց օգնությամբ իրենց խոսքային գործառույթներն են իրականացնում գնահատողական կառույցի բաղադրիչները ինչպես ասույթի, այնպես էլ տեքստի մակարդակում:

Ածականական գնահատողական կառույցներում առարկային հատկանիշի վերագրումը պայմանավորված է ասության սուբյեկտի դիտավորությամբ՝ առարկայի որևէ հատկանիշի ընտրությամբ և առարկայի որակական բնորոշմամբ: Ուստի, ածականական գնահատողական կառույցներ պարունակող ասույթների իմաստագործառական առանձնահատկությունների ուսումնասիրման կարևոր ազդակներից է գնահատության օբյեկտի որակական յուրահատկությունների լեզվական դրսևորումների խնդիրը:

Հետազոտական նյութը հնարավորություն է ընձեռում առանձնացնել մի շարք լեզվական միջոցներ, որոնց օգնությամբ գնահատության օբյեկտն իր գործառույթն է իրականացնում կառույցում:

Այսպես, գնահատության օբյեկտը կառույց կարող է ներմուծվել "in" նախդիրի միջոցով: Այս դեպքում նախդրային շարույթի կազմում գնահատության օբյեկտը կարող է արտահայտված լինել՝

- գործողությունն ցույց տվող գոյական անվանք  
... he saw them bathed in that steady flow of yellow light... in their movements they were beautiful. (V. Woolf, Night and Day)
- հատկանիշ ցույց տվող գոյական անվանք  
... his gaze was insolent in its indifference. (D. Lawrence, The Virgin and the Gipsy)
- անձի հոգեկան հատկանիշներ ցույց տվող գոյական անվանք  
... she was so old in her manner – absolutely in a dither. (A. Christie, Murder in Easy)
- կանխադրություն

He was late in arriving, which was good in that it delayed the inevitable questions as to the fate of the picture but bad in every other respect. (P. Wodehouse, The Man Upstairs and Other Stories)

Գնահատության օբյեկտը կարող է արտահայտված լինել նաև something, anything, nothing անորոշ դերանունով, ինչպես նաև there is something, adj. about smb/somth. կառույցով: Այս դեպքում ողջ նախդրային կառույցը ձեռք է բերում մեկ այլ նշանակություն: Օրինակ.

There was something strong in her words. (H. James, The Europeans)  
... there is something curious about you. You are curiously strong. (D.

*Lawrence, Women in Love*) → *That you are strong is curious*;

Danny had grown huge and terrible. His eyes flared like headlights of an automobile. There was something fearsome about him. He held the pine table-leg in his right hand, and even it had grown. Danny challenged the world. (J. Steinbeck, Tortilla Flat) → That Danny had grown huge and terrible that his eyes flares... was fearsome;

Ակնհայտ է, ինչպես երևում է բերված օրինակներից, որ ածականի օգնությամբ գնահատվում է ոչ թե հենց օբյեկտը, այլ նրա որևէ հատկանիշ, անկախ այն բանից, թե անորոշ դերանունը մատնանշում է մեկ, թե մի քանի հատկանիշ, կամ էլ այն ընդհանրապես գուրկ է որևէ առարկայական վերաբերումից:

Օբյեկտը կարող է նաև գնահատվել իրեն բնութագրող համալիր հատկանիշներով. Օրինակ.

“It gives me real pleasure to use things that are attractive in themselves – pleasant things”. (D. Lawrence, Women in Love)

Նման դեպքերում գնահատության օբյեկտը և գնահատության հիմունքները նույնանուն են: Գնահատությունը ներառում է օբյեկտի բոլոր հատկանիշները: in itself, in themselves տիպի նախդրային շարույթների գործածությունը նպաստում է գնահատության ուժգնացմանը:

Հատկանշական են նաև այն դեպքերը, երբ ասության սուբյեկտը գնահատության է ենթարկում մի շարք առարկաներ՝ հենվելով դրանցից մեկի որևէ հատկանիշի վրա: Այստեղ նման գնահատությունը հենվում է մի քանի հատկանիշի վրա: Օրինակ.

բ) բացահայտվում է ածականի իմաստը, այսինքն՝ տրվում են գնահատության հիմունքներ: Օրինակ.

With her lively perception and her refined imagination she was capable of enjoying anything that was characteristic; anything that was good of its kind – the Wentworth household seemed to her very perfect of its kind – wonderfully peaceful and unspotted; pervaded by a sort of dove-colored freshness that had all the quietude and benevolence of what she deemed to be Quakerism, and yet seemed to be founded upon a degree of material abundance for which... one might have looked in vain at the frugal little court of Silberstadt – Schreckensvein. (H. James, The Europeans)

Ինչպես տեսնում ենք, այս ծավալուն ասությամբ մի կողմից մասնավորեցվում է kind գոյականի իմաստը, մյուս կողմից՝ perfect ածականի գնահատման հիմունքները. ի դեպ՝ բացահայտում են ընթանում է վերացականից կոնկրետ՝ perfect of this kind → peaceful, unspotted, dove-coloured freshness, quietude, benevolence: Գնահատության հիմունքը համեմատություն է սոցիալ-ազգային ավանդական ըմբռնումների համատեքստում (Վենսվորտների տունը որոշակի առավելություններ ուներ եվրոպական այն փոքրիկ և համեստ տան համեմատությամբ, որտեղ ժամանակին ապրել էր հերոսուհին):

Գնահատողական կառույցներում հաճախ են գործածվում ածականներ, որոնք գուրկ են իմաստային հստակությունից: Դրանք իրենց բնույթով մոտ են հարաբերական ածականներին: Նման ածականների առկայությունն էլ ավելի է կարևորում գնահատության հիմունքի դերն ասության: Այդ իսկ պատճառով նման բնույթի ածականական գնահատողական կառույցներ պարունակող ասությամբը հաճախ են ուղեկցվում հարցերով ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր խոսքում (գեղարվեստական տեքստերում): Ասության նպատակը գնահատության բովանդակությունը պարզաբանելու համար խոսքային իրադրության մասնակիցներից մեկի կողմից կարող են տրվել հետևյալ տիպի հարցեր՝ In what way? In what sense? In what style? Why?

Այս հարցերի օգնությամբ պարզաբանվում են գնահատության կառույցների ածականների արտահայտած իմաստների որակական և պատճառակցային հարաբերությունները գնահատության սուբյեկտի հետ՝ նպաստելով գնահատության հիմունքի բովանդակության բացահայտմանը: Օրինակ.

“My dear sister”, said Felix, “the inhabitants are charming”.

“In what style?” (H. James, The Europeans)

But on close examination he (Joseph) proves to be somewhat peculiar. Peculiar? In what way? (S. Bellow, Dangling Man)

## ОВСЕПЯН ГОАР ГЕОРГИЕВНА

### Семантико-функциональные особенности актуализации прилагательных в английском языке

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.02.07- "Германские языки"

Защита состоится 25-го декабря 2009 г. в 13.30 на заседании специализированного совета 009 при Ереванском государственном университете по адресу: Ереван, ул. Алека Манукяна 1.

#### РЕЗЮМЕ

Реферируемая диссертационная работа посвящена исследованию семантических и функциональных особенностей актуализации прилагательных в английском языке на материале британской и американской художественной литературы XIX-XX веков.

Актуальность настоящего исследования обусловлена тем, что несмотря на многочисленные работы в области изучения морфологических, синтаксических и семантических свойств прилагательного, многие вопросы, связанные с изучением семантико-функциональных особенностей прилагательных в свете современных теорий актуализации, остаются все еще нерешенными.

Современная теория актуализации, в частности праксематика, ориентирована на изучение лингвистических и экстралингвистических факторов продуцирования смысла на уровне высказывания и текста.

Основная цель работы заключается в исследовании семантико-функциональных особенностей предикативных и атрибутивных прилагательных английского языка в процессе их актуализации на уровне высказывания, а также на уровне текста с позиции оценочных конструкций.

Такой подход обосновывается следующими соображениями:

- характерной особенностью праксематической теории является изучение разноплановых структур, с целью выявления и описания относительно полного набора параметров актуализации одного и того же языкового явления (в нашем случае прилагательного),
- прилагательному присущи такие основополагающие свойства для данной части речи, как предикативность и оценочность.

Для достижения поставленной цели необходимо было:

- выявить лингвистические и экстралингвистические факторы актуализации прилагательных,
- определить принципы классификации предикативных конструкций на уровне высказывания,

- выявить факторы, способствующие возникновению оценочного значения на уровне текста с наличием адъективных конструкций.

Научная новизна работы заключается в том, что через призму современной теории актуализации впервые рассматриваются семантико-функциональные особенности адъективных конструкций на уровне высказывания и текста. Исследование показало, что оценочные конструкции имеют сильные позиции в тексте, осуществляя важнейшие метапраксемные функции.

Исследование проводилось с применением лингвистических методов трансформации и описания, а также - сопоставительного и компонентного анализа.

Теоретическая значимость работы состоит в том, что она вносит существенный вклад в исследование имени прилагательного, в частности установлении лингвистических и экстралингвистических факторов его актуализации.

Практическое значение заключается в возможности применения результатов работы в процессе преподавания теоретических и специальных курсов по грамматике английского языка

05.02.2013

ՀՀ Ազգային գրադարան



NL1710317

